ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական
հարցերի մշտական հանձնաժողովի
նախագահ պարոն Նարեկ Զեյնալյանին

ՀՀ քաղաքացի Մուշեղ Հովսեփյանից

[redacted]

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Հարգելի՛ պարոն Զեյնալյան,

Համաձայն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին:

1. Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) 2019-2020 թվականներին իրականացրե՞լ է խորհրդարանական վերահսկողություն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման (այդ թվում՝ հատվածաբար) ընթացքի նկատմամբ: Եթե այո, ապա խորհրդարանական վերահսկողության արդյունքում ընդունվե՞լ է գրավոր եզրակացություն:

2. 2020 թվականին հանձնաժողովը դիմե՞լ է ՀՀ կառավարությանը՝ բացահայտելու «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ ԱԺ քննարկմանը չներկայացնելու պատճառները: Եթե այո, ապա ի՞նչ պատճառներ է նշել ՀՀ կառավարությունը:

3. 2021 թ. հունվարի 13-ի դրությամբ հանձնաժողովն իր իրավասության շրջանակում ի՞նչ գործողություններ է ձեռնարկել 2020 թվականի պատերազմի հետևանքով հաշմանդամություն ձեռք բերած անձանց իրավունքները երաշխավորելու, ապահովելու, պաշտպանելու և մշտադիտարկելու ուղղությամբ: Մասնավորապես՝ հանձնաժողովը դիմե՞լ է

հարցումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հրավիրե՞լ է խորհրդարանական լսումներ կամ ստեղծե՞լ է ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր:

Տեղեկացնում եմ, որ սույն հարցումն ուղարկվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին: Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Շնորհակալություն:

Մուշեղ Հովսեփյան
13.01.2021